

**Դ.Թումասյան**

**Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային  
և ներպետական օրենսդրությունը.  
Միջազգային չափորոշիչների կիրառումը  
ՀՀ իրավական համակարգում**

**(Մոդուլ 1)**

**Երևան 2011**

*Երեմյան Ա., Թումայան Դ., Ղամբարյան Ա., Պետրոսյան Տ. Հայաստանի Հանրապետությունում մարդու բրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները (ձեռնարկ դասավանդողների համար): Երևան. «Ասոլիկ» Հրատ., 2011, 340 էջ:*

ISBN 978-92-9235-881-5

Սույն ձեռնարկը նախատեսված է իրավապահ մարմինների աշխատակիցների, ինչպես նաև աշխատանքային տեսուչների վերապատրաստման ընթացքում «Մարդու բրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի իրավական հիմունքները» դասավանդողների համար: Այդ նպատակով դասավանդողներին ներկայացվում է դասավանդման ընդհանուր մեթոդարանությունը և ըստ կոնկրետ մոդուլների՝ տրամադրվում են դասավանդման համար անհրաժեշտ նյութեր և դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ խորհրդակներ: Ձեռնարկը կարող է օգտակար լինել նաև ԲՈՒՀ-երում և այլ հաստատություններում ու կառույցներում մարդու բրաֆիքինգի և մարդու շահագործման դեմ պայքարի իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող անձանց համար:

Ձեռնարկը կազմվուն և հրատարակելուն աջակցել են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) և Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Երևանի գրասենյակները՝ ԵՄ ֆինանսավորմամբ: Հեղինակների խումբն իր երախտագիտությունն է հայտնում այս ձեռնարկի ստեղծմանն աջակցող կազմակերպություններին, ինչպես նաև ձեռնարկի խմբագիր, իրավագիտության թեկնածու Ա. Խորխոռունուն:

Ձեռնարկում ներկայացված տեսակետներն արտացոլում են հեղինակների մոտեցումները, որոնք կարող են չհամընկնել սույն ձեռնարկի հրատարակմանն աջակցող կազմակերպությունների տեսակետներին:

## **Բովանդակություն**

- 1. Ներածական մաս**
- 2. Դասախոսին տրամադրվող նյութեր**
  - 2.1. Թրաֆիքինգը և մարդու իրավունքները**
  - 2.2. Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային հիմնական փաստաթղթեր**
  - 2.3. Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող ներապետական օրենսդրության ակնարկ**
- 3. Տրամադրվող նյութեր**
- 4. Հարցեր քննարկման համար**
- 5. Խնդիրների քննարկում**
- 6. Սլայդներ**

## **1. Ներածական մաս**

Դասավանդողը պետք է դնդիանուր պատկերացում տա ունկնդիրներին միջազգային ակտերի ու գործիքների մասին, այնուհետև ներկայացնի բռաֆիքինզին վերաբերող միջազգային ակտերը:

Դասավանդողը պետք է ուշադրություն դարձնի հետևյալ հարցերին՝

1. ՍԱԿ-ի և ԵԽ-ի կոնվենցիաների կարգավորման առարկան, կառուցվածքը, դերը և նշանակությունը,

2. այդ կոնվենցիաների հարաբերակցությունը միջազգային այլ փաստաբերդների հետ,

3. ՀՀ-ի կողմից այդ կոնվենցիաների վավերացումը,

4. ՀՀ իրավական համակարգում դրանց դերն ու նշանակությունը,

5. միջազգային և ազգային օրենսդրության համապատասխանելիությունը:

Այնուհետև, դասավանդողը պետք է միևնույն միջազգային առանձին ակտերի մեկնարարանությունը ներկայացնի բռաֆիքինզը՝ որպես մարդու իրավունքների կոպիտ խախտում:

## **2. Գասահտուին տրամադրվող նյութեր**

### **2.1. Թրաֆիքինգը և մարդու իրավունքները**

Իրավաբանական գիտության մեջ «իրավունք» եղանակային ընկալվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ առումներով: Օբյեկտիվ առումով իրավունքը պետության կողմից սահմանված և պաշտպանվող համապարտադիր, ձևականորեն որոշակի վարքագծի կանոնների համակցություն է, որն արտահայտում է հասարակության ընդհանուր և անհատական շահերը, հանդիսանում է հասարակական հարաբերությունների կարգավորիչ: Սուբյեկտիվ առումով իրավունքը մարդուն տրված հնարավորությունն է՝ սեփական հայեցողությամբ որոշելու իր վարքագծի չափը:

Որպեսզի մարդը կարողանա բավարարել իր նյութական, հոգևոր և այլ պահանջները, օգտագործի և զարգացնի մարդկային հատկանիշները, մտավոր կարողությունները, նրան անհրաժեշտ են համապատասխան հնարավորություններ: Դրանք պետության կողմից ձևակերպվում են որպես մարդու իրավունքներ և ազատություններ:

Մարդու իրավունքները կարելի է սահմանել որպես բնությունից մարու շնորհված հատկություն, որտեղ ունեն գերակայություն մարդկային համակեցության մյուս բոլոր կանոնների նկատմամբ: Սա նշանակում է, որ մյուս բոլոր մարդիկ, պետությունը, կազմակերպությունները պարտավոր են ձեռնապահ մնալ այդ վարքագծին միջամտելուց: Մարդու իրավունքները որոշվում են «մարդ-պետություն» հարաբերություններով, որտեղ կողմերից յուրաքանչյուրն ունի իրավունքներ և պարտականություններ: Մարդու իրավունքներին համապատասխանում են պետության պարտականությունները և հակառակը:

Միջազգային իրավունքում մարդու իրավունքների հայցակարգը ձևակերպվել է երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և ձևակերպվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների

համընդիանուր հոչակազրում, սակայն սկզբնաղբյուրները զալիս են մարդկության պատմության ավելի վաղ շրջանից: Ներկայունս քաղաքակիրք աշխարիլ սոցիալական արդարության տեսակետից գերակայություն է տալիս մարդու իրավունքներին և ազատություններին: Ինչպես նշվում է Մարդու իրավունքների համընդիանուր հոչակազրի ներածությունում՝ մարդու իրավունքների և մարդկային արժանապատվության հարգումը «ազատության, արդարության և համընդիանուր խաղաղության հիմքն է»: Մարդու իրավունքները չեն շնորհվում պետության կամ որևէ անձի կողմից և համարվում են բնական, ի ծնե մարդուն տրված հնարավորություն: Դրանք.

- համընդիանուր են, քանի որ պատկանում են բոլոր մարդկանց,

- փոխկապակցված են և փոխլրացնող, քանի որ քաղաքական և քաղաքացիական իրավունքներն օգնում են իրականացնելու տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ և հակառակը,

- անօտարելի են, քանի որ ոլրանցով մարդն օժտված է ի ծնե, ուստի ոչ չի կարող նրան զրկել այդ իրավունքներից:

Մարդու իրավունքները բնորոշվում են մի շարք չափանիշներով.

- բոլոր մարդիկ, առանց որևէ խտրականության, ունեն հիմնական իրավունքներ ու ազատություններ,

- մարդն օժտված է բնական իրավունքներով և ազատություններով՝ անկախ տարածքից, պետական և հասարակական կառուցվածքից, քաղաքական ուժիմից,

- մարդու իրավունքները պաշտպանվում են ազգային և միջազգային մակարդակով,

- անընդունելի է առաջնություն տալ իրավունքների մի մասին և անտեսել մյուսները<sup>1</sup>:

<sup>1</sup> Երեմյան Ա., Թումայան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում բրաֆիքինզի դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2009, էջեր 16-17:

«Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինզի դեմ պայքարի վերաբերյալ սկզբունքների և ուղենիշների» համաձայն՝ ՄԱԿ-ի մարդու իրավունքների գծով գերազույն հաճանակատարը համարում է, որ թրաֆիքինզի դեմ պայքարի բոլոր միջոցառումների առանցքը պետք է կազմի թրաֆիքինզի ենթարկված անձանց իրավունքների պաշտպանությունը<sup>2</sup>:

Սահմանադրության ներկայացրեք «Թրաֆիքինզի արդյունքում հաճախ հանդիպող մարդու իրավունքների խախտումների» ներկայացման նպատակները՝

- ուսումնասիրել, պարզել, հասկանալ և ամրագրել գիտելիքները թրաֆիքինզի ընթացքում խախտվող իրավունքների վերաբերյալ,

- ուսումնասիրել, պարզել, հասկանալ և ամրագրել գիտելիքներն այն միջազգային ակտերի վերաբերյալ, որտեղ այդ իրավունքներն ամրագրված են:

Յուցադրեք «Թրաֆիքինզի արդյունքում հաճախ հանդիպող մարդու իրավունքների խախտումները» վերմագրով լայլը:

Այդ սլայդի ցուցադրման ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվում արժանապատվության, խտրականությունից զերծ մնալու, կյանքի, ազատության և սեփական անձի անձեռնմխելիության, ստրկությունից, շահագործումից ազատ լինելու, հարկադիր աշխատանքն արգելելու, խոշտանգումների և/կամ այլ դաժան, աննարդկային կամ նվաստացուցիչ վերաբերնունքի կամ պատժի չենթարկվելու, արդարադատության մատչելիության և արդար դատաքննության, կամայական կալանքի, ծերբակալման կամ արտաքսման, տեղաշարժի ազատության և սեփական բնակության վայրն ազատորեն ընտրելու, ապաստանի, ազատ արտահայտվելու և մասնակցե-

<sup>2</sup> Վիեննայի ֆորումը մարդկանց թրաֆիքինզի դեմ պայքարի թեմայով, 13-15 փետրվար 2008 թ., թիվ 007 աշխատանքային հանդիպում: Պաշտպանությունից մինչև հետապնդում. ուազմավարական մոտեցում, էջ 2:

լու (Երկրի կառավարմանը, միություններին և այլն), առողջապահական և սոցիալական ծառայություններից օգտվելու, աշխատանքի ազատ ընտրության, կրթության և վերապատրաստման իրավունքներին՝ մատնանշելով այն միջազգային իրավական ակտերը, որոնցով դրանք ամրագրված են:

#### Դասավանդողի համար օգտակար նյութեր.

- Մարդու իրավունքների համընդհանուր հոչակագիր,
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր,
- Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիա,
- Եվրոպական սոցիալական խարտիա,
- Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիա,
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր,
- Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի կամ պատժի դեմ պայքարի մասին կոնվենցիա,
- Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան և այլն:

### ***2.2. Թրաֆիքինզի ոլորտը կարգավորող միջազգային հիմնական փաստաթղթեր***

#### Դասավանդողի համար օգտակար նյութեր.

1. ՍԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանգարության դեմ 2000 թ. կոնվենցիան,
2. Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը՝ մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին,
3. Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը՝ ցամաքով, ծովով և օդով միզրանտների անօրինական ներս բերելու դեմ,
4. Եվրոպայի խորհրդի 2005 թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինզի) դեմ պայքարի մասին կոնվենցիան,

5. Արդյունաբերությունում և առևտրում աշխատանքի տեսչության մասին կոնվենցիա,

6. Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին կոնվենցիա,

7. Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա,

8. Երեխայի աշխատանքի վատքարագույն ձևերի արգելման և արմատախիլ անելու անհապաղ միջոցառումների մասին կոնվենցիա,

9. միջազգային-իրավական այլ գործիքներ:

Յուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներառյալ օրենսդրությունը» սայրը:

Առաջին հերթին ներկայացրեք ՍԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000 թ. կոնվենցիան:

Հակիմ ներկայացրեք այդ Կոնվենցիան: Օրինակ, ներկա դրությամբ բրաֆիրինգը կարգավորող հիմնական միջազգային իրավական փաստաթղթերից է ՍԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000 թ. կոնվենցիան (յուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներառյալ օրենսդրությունը» դիդակտիկ նյութի «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող հիմնական միջազգային ակտեր» վերճագրով սյայրը) և դրա երկու կամընտիր Արձանագրությունները՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին և Ցամաքով, ծովով և օդով միջօրանտների անօրինական ներս բերելու դեմ (տես՝ բաժնանվող նյութը): Այս փաստաթղթերի լնողունումը միջազգային հանրության վերաբերմունքն էր անդրազգային կազմակերպված հանցագործությունների նկատմամբ և պետություններին հնարավորություն է տալիս բրաֆիրինգի հիմնախնդրին մոտենալ համակղմանիորեն:

Այդ Կոնվենցիան ունի պարտադիր իրավաբանական ուժ և մասնակից պետություններին պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել անդրազգային կազմակերպված հանցա-

գործությունների դեմ պայքարելու համար: Այն կազմված է 41 հոդվածից: Կոնվենցիայի հիմնական նպատակն է նպաստել անդրազգային կազմակերպված հանցավորության առավել արդյունավետ կանխարգելմանը և աջակցել դրա դեմ պայքարի գործում համագործակցությանը:

Յուցադրե՛ք «Թրաֆիրիմզի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը» դիդակտիկ ձյուրի «ՄԱԿ-ի Կոնվենցիայի համաձայն հանցագործությունն անդրազգային բնույթ է կրում, եթե» վերնագրով պայմը:

Այնուհետև մեկնարանե՛ք, որ մասնակից պետությունները պարտավոր են իրենց ազգային օրենսդրությունում քրեականացնել Կոնվենցիայում նախատեսված հանցագործությունների տեսակները: Կոնվենցիան նախատեսվում է կիրառել այնպիսի հանցագործությունների կանխարգելման, քննության և հետապնդման նպատակով, ինչպիսիք են.

- կազմակերպված հանցագործությունները, դրանցում մասնակցությունը (հոդ. 5),

- հանցագործություններից ստացվող եկանուտների լվացումը (հոդ. 6),

- կաշառակերությունը, կոռուպցիան (հոդ. 8),

- արդարադատության իրականացումը խոչընդուտնելը (հոդ. 23),

- ինչպես նաև հանցագործություններ, որոնք կապված են կազմակերպված հանցավոր խմբի մասնակցությամբ և անդրազգային բնույթ ունեցող հանցավոր այնպիսի արարքների հետ, որոնց կատարման համար, Կոնվենցիայի 2-րդ հոդվածին համապատասխան, կողմերի ներպետական օրենսդրությամբ նախատեսված է ազատազրկում՝ չորս տարուց ոչ պակաս ժամանակով, կամ ավելի խիստ պատիժ:

Կոնվենցիայում նշված են կազմակերպված և դիտափրությամբ կատարվող հանրավտանգ այլ արարքների քրեականացման հիմնական սկզբունքները և դրանց դեմ իրականացվելիք պայքարի միջոցները՝ առանձնահատուկ կարևորելով նաև այդպիսի հանցագործությունների հետ

առնչություն ունեցած իրավաբանական անձանց պատասխանատվության հարցը:

Կոնվենցիայի նպատակների իրականացման համար նախատեսված են մասնակից պետությունների միջև համագործակցության հետևյալ հիմնական ուղղությունները.

- դրամական միջոցների լվացման դեմ պայքար,
- հանցավոր ճանապարհով ձեռք քերված եկամուտների կամ գույքի բռնագրավում,
- կազմակերպված հանցավոր խմբի կամ անձի հանձնում,
- դատապարտված անձանց փոխանցում,
- փոխադարձ իրավական օգնություն,
- համատեղ քննությունների անցկացում,
- քրեական վարույթի փոխանցում,
- դատվածության վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- իրավապահ մարմինների միջև համագործակցություն,
- կազմակերպված հանցավորության բնույթի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում,
- կաղողերի պատրաստում և տեխնիկական օգնություն:

*Կատարե՛ք ակնարկ ՀՀ-ում այլ պետությունների հետ համագործակցության վերաբերյալ: Բերե՛ք օրինակ պրակտիկայից:*

Կոնվենցիային համապատասխան՝ միջպետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել նաև մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանման սկզբունքով, մասնավորապես՝ առաջադրված մեղադրանքից պաշտպանվելու և անհրաժեշտ իրավաբանական օգնություն ստանալու, անձի նկատմամբ ռասայական, սեռային կամ այլ խտրականություն չդրսնորելու, անձի ազատության և անձեռնմխելիության ապահովման, ազատ տեղաշարժի, հաղորդումների գաղտնիության և այլ բնագավառնե-

րում, որոնք բխում են ՀՀ ստանձնած միջազգային այլ պարտավորություններից:

Կոնվենցիայում նախատեսված են համապատասխան դրույթներ՝ մասնակից պետությունների միջև առաջացած հնարավոր վեճերի կարգավորման, Կոնվենցիան ստորագրելու, վավերացնելու, իրականացնելու, լնդացակարգերի, Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու, դրանում ուղղումներ կատարելու, գործողությունը դադարեցնելու վերաբերյալ: Կոնվենցիայի 37-րդ հոդվածին համապատասխան՝ այն կարող է լրացնել մեկ կամ մի քանի արձանագրություններով, որոնց մասնակից կարող են լինել Կոնվենցիայի մասնակից պետությունները: Այդպիսի ցանկացած արձանագրություն մեկնարարանվում է Կոնվենցիայի հետ համատեղ:

Այդ նախադասությամբ սահում անցում է կատարվում հասդող փաստարդի ներկայացմանը և ուսումնասիրությամբ: Դա է Պայերմոյի արձանագրությունները՝ մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին:

Դասավանդող ևս մեկ անգամ հիշեցնում է, որ այս արձանագրությունը մեկնարարանվում է ՍԱԿ-ի Կոնվենցիայի համատերսում:

Արձանագրությունը ներկայացնելը կարելի է սկսել այսպես. Չնայած մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման դեմ պայքարի պրակտիկ միջոցառումներ նախատեսող մի ամբողջ շարք միջազգային փաստարդերի գոյությանը՝ միջազգային իրավական համակարգում չկար համընդիանուր փաստաթուղթ, որտեղ շոշափվեին մարդկանց առևտրի բոլոր կողմերը: Այդ բացը լրացրեց ՍԱԿ-ի Անդրագագային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիան լրացնող՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին արձանագրությունը:

Համոզված լինելով, որ Անդրագագային կազմակերպված հանցավորության դեմ ՍԱԿ-ի կոնվենցիան մարդկանց, հատ-

կապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման և պատժի մասին միջազգային փաստաբորով լրացնելը կնպաստի այդպիսի հանցագործությունների կանխարգելմանը և դրանց դեմ պայքարին, պետությունները ստորագրեցին այս արձանագրությունը, որը կազմված է ընդամենը 20 հոդվածից:

Ցուցադրեք «Թրաֆիքինզի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը» դիդակտիկ նյութի «Պալերմոյի 2000 թ.-ի արձանագրությունն ունի երեք հիմնական նպատակ՝» վերնագրով սյալոր:

Արձանագրությունն ունի երեք հիմնական նպատակ: Դրանք են.

- մարդկանց առևտրի կանխարգելումը և դրա դեմ պայքարը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանանց և երեխաներին,

- բրաֆիքինզից տուժողների պաշտպանությունը և օգնությունը՝ ամբողջովին հարգելով նրանց մարդու իրավունքները, և

- այդ նպատակներին հասնելու գործում մասնակից պետությունների համագործակցության խրախուսումը (հոդ. 2):

Այնուհետև պետք է խոսել Արձանագրության հիմնական առանձնահատկությունների մասին:

Ցուցադրեք «Թրաֆիքինզի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը» դիդակտիկ նյութի «Արձանագրության առանձնահատկություններն են՝» վերնագրով սյալոր:

Դրանցից են.

- այն բրաֆիքինզը համարում է մարդկության դեմ ուղղված հանցագործություն,

- տախս է «մարդկանց առևտուր» հասկացության սահմանումը,

- ընդլայնում է բրաֆիքինզի գործընթացի բաղադրիչները՝ մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը,

թաքցնելը կամ ստանալը՝ ուժի սպառնալիքով կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառմամբ, առևանգման, խարդախության, խարեւության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ ուրիշ անձի կողմից վերահսկվող անձի համաձայնությունն ստանալու համար վճարումների կամ շահերի ձևով կաշառելու ճանապարհով, ինչպես նաև այդպիսի հանցագործությունների կատարման փորձը, հանցակցությունը և այդպիսի արարքների կատարման նպատակով անձանց կազմակերպելը կամ դեկավարելը,

- անդրադառնում է օգտագործվող տարաբնույթ միջոցներին՝ ուժից մինչև համոզելը՝ «համաձայնություն» ստանալու նպատակով, օգտվելով անձի վիճակի խոցելիությունից,

- կարևոր նշանակություն է տալիս խարեւության հանգամանքին, քանի որ այն թրաֆիքինգի հանցակազմի տարբերից է,

- նախատեսում է, որ շահագործվողի համաձայնությունը որևէ նշանակություն չունի, եթե կիրառվել են սահմանման մեջ նշված միջոցները,

- սահմանում է թրաֆիքինգի բոլոր տեսակները՝ չսահմանափակվելով սեռական շահագործմամբ և ներառելով հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը ննանքող վիճակը, անազատ վիճակը կամ մարմնի մասերը կորզելը:

Արձանագրությունը նախատեսում է մարդկանց, հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետ միջոցներ և համընդգրկուն միջազգային մոտեցում ելքի, տարանցիկ և մուտքի երկրներում, ներառյալ այն միջոցները, որոնք ուղղված են այդպիսի թրաֆիքինգի կանխարգելմանը, դրանով գրաղվող անձանց պատժելուն և թրաֆիքինգի զոհերի պաշտպանությանը, այդ

թվում նրանց՝ միջազգայնորեն ճանաչված մարդու իրավունք-ների պաշտպանության միջոցով:<sup>3</sup>

Թրաֆիքինզը ներառում է.

- **գործողություններ՝** մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, բարցնելը կամ ընդունելը,

- **միջոցներ՝** ուժի սպառնալիք կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի որևէ այլ ձև կիրառելու, առևանգման, խարդախության, խարեւության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ այլ անձնավորության նկատմամբ որոշակի վերահսկողություն իրականացնող որևէ անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով դրամական միջոցներ կամ այլ օգուտներ տրամադրելու կամ ստանալու եղանակով երեխաների շահագործման համար այս միջոցներից ոչ մեկի կիրառումը պարտադիր չէ, երեխաները իրավասություն չեն ինքնուրույն համաձայնություն տալու,

- **նպատակներ՝** շահագործում, այդ թվում՝ սեռական, աշխատանքային, ստրկություն կամ ստրկությանը նմանվող վիճակ, օրգանների կամ հյուսվածքների կորզում:

Բերեք մի օրինակ. ոմն Կ-Ա, Ուկրաինայից վերադառնալով Հայաստան և օգտվելով այն հանգամանքից, որ համագյուղացիներն աշխատանքով ապահովված չեն ու գտնվում են նյութական ծանր վիճակում, նրանցից մի քանիսին առաջարկել է մեկնել Ուկրաինա՝ շինարարական աշխատանքների. Նրանց նաև խոստացել է վճարել յուրաքանչյուր ամիս 200.000 <<դրամ: Նրանցից չորսը համաձայնել և ճանապարհածության համար հայրհայրել են որոշ զումար (պարտը, գրավ): Այսուել, ժամանակավորապես հաշվառելու պատրվակով վերցրել է բոլորի անձնագրերը, բույլ չի տվել հեռախոսակապ հաստատել հարազատների հետ, ներգրավել է հարկադիր շինարարական աշխատանքների մեջ, չի վճարել՝ հավաս-

<sup>3</sup> Երեմյան Ա., Թումայան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում բրաֆիքինզի դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2009, էջեր 23-24:

*տիացնելով՝ իր նրանց աշխատավարձն ուղարկել է իրենց ընտանիքներին։ Երբ վերջիններս բմբուստացել են, դաժանարար ծեծի է ենթարկել նրանց, զրկել սմնովից և ջրից։*

*Բերված օրինակով վերլուծել գործողությունները, միցոցները և նպատակը։*

*Ցուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը» դիտակտիկ նյութի «Արձանագրությամբ միջավետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել նաև հետևյալ բնագավառներում» վերճագրով պայմենները։*

Արձանագրության շրջանակներում միջազգետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել ինչպես միջազգային իրավական, այնպես էլ կողմերի ներպետական օրենսդրության սկզբունքներով՝ հանրավտանգ արարքների քրեականացնան, դրանց նկատմամբ պատժողական համաձայնեցված քաղաքականության իրականացնան բնագավառներում՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության սկզբունքով, մասնավորապես, նարդու կյանքի, անձի ազատության և անձեռնմխելիության, արժանապատվության, անձնական կյանքի, մշտական բնակության վայր վերադարձի, պատճառված վճասի փոխհատուցման, տեղեկատվություն ստանալու, աշխատանքի, կրթության, առողջության պահպանման, բժշկական օգնության և սպասարկման, խախտված իրավունքների վերականգնման, իրավաբանական օգնություն ստանալու բնագավառներում։

Արձանագրությամբ միջազգետական համագործակցությունը նախատեսված է իրականացնել նաև հետևյալ բնագավառներում։

- քրաֆիրինգի գոհերի օգնություն և նրանց պաշտպանություն,

- տեղեկատվության փոխանակում և կաղըերի պատրաստում,

- սահմանային հսկողության միջոցների սահմանում,

- կառավարական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության հետ համագործակցություն,

- փաստաթղթերի հավաստիության և օրինականության նկատմամբ վերահսկողություն:

Արձանագրության կողմերը պարտավորվել են թրաֆիքինգը կանխարգելելու միջոցների ձեռնարկել կրթության, մշակույթի, սոցիալական ապահովության բնագավառներում ներպետական օրենսդրության կատարելագործման, երկողմ և բազմակողմ համագործակցության զարգացման ուղղությամբ:

Արձանագրությամբ նախատեսված են նաև դրույքներ՝ մասնակից պետությունների միջև առաջացած հնարավոր վեճերի կարգավորման, արձանագրությունը ստորագրելու, վավերացնելու ընթացակարգերի, արձանագրությունն ուժի մեջ մտնելու, դրանում ուղղումներ կատարելու, գործողությունը դադարեցնելու վերաբերյալ:

Գործնական առաջադրանք. Կարդայ և վերլուծել Կոնվենցիայի և Արձանագրության որոշ հոդվածները և գուցահեռներ անցկացնել ՀՀ գործող օրենսդրության հետ:

Այնուհետև վերլուծե՛ք ԵԽ-ի 2005 թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիան և մեկնարամեր այն:

Քանի որ տղամարդկանց, կանանց և երեխաների թրաֆիքինգը հասել է աննախադեպ չափերի նաև Եվրոպայում, հետևաբար այդ պատճառով Եվրոպայի խորհուրդը 2005 թ. մայիսի 16-ին ընդունեց Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիան, որը բաղկացած է ներածությունից, 10 գլուխներից և 47 հոդվածներից: Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կանխարգելել այս հանցագործությունն ու պայքարել մարդկանց թրաֆիքինգի դեմ՝ երաշխավորելով գենդերային հավասարությունը,

բ) պաշտպանել թրաֆիքինգի զոհերի մարդու իրավունքները, մշակել գրիերի ու վկաների պաշտպանության և օգնության համապարփակ մեխանիզմ՝ երաշխավորելով գեն-

դերային հավասարությունը, ինչպես նաև ապահովել արդյունավետ քննություն և քրեական հետապնդում,

գ) նպաստել մարդկանց թրաֆիքինզի դեմ պայքարի բնագավառում միջազգային համագործակցության զարգացմանը:

Ցուցադրեք «Թրաֆիքինզի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրություն» դիդակտիկ նյութի «ԵԽ-ի 2005 թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինզի) դեմ պայքարի մասին կոնվենցիայի նպատակներմ են.» վերագրով պայտը:

Սեկնարաներ յուրաքանչյուր նպատակ՝ հատուկ ուսուցություն դարձնելով գեներային ասպեկտներին:

Թրաֆիքինզի դեմ պայքարի այլ միջազգային իրավական փաստաթղթերի հետ համեմատած՝ այս Կոնվենցիայի արժեքը կայանում է նրանում, որ այն ունի նաև սոցիալական ուղղվածություն և կենտրոնացված է մարդու իրավունքների և թրաֆիքինզի գործի պաշտպանության հարցերի վրա: Այդ է պատճառը, որ Կոնվենցիայի ներածությունում թրաֆիքինզի համարվում է մարդու իրավունքների խախտում և ոտնագործյուն անձի արժանապատվության ու անձեռնմխելիության դեմ, կարևորվում է գործերի իրավունքների պաշտպանությունը:

Ցուցադրեք «Թրաֆիքինզի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրություն» դիդակտիկ նյութի «ԵԽ Կոնվենցիայի առանձնահատկություններմ են.» վերագրով պայտը: Սեկնարաներ յուրաքանչյուր առանձնահատկությունը:

ԵԽ Կոնվենցիայի առանձնահատկություններն են՝

- թրաֆիքինզի ճանաչումը որպես մարդու իրավունքների խախտում,

- գործերին օգնություն ցույց տալը և նրանց իրավունքների պաշտպանությանը հատուկ ուշադրություն դարձնելը,

- կիրառման ընդգրկուն ոլորտը, որը ներառում է թրաֆիքինզի բոլոր ծերը, ինչպես նաև ազգային կամ անդրազգային բնույթը,

- կիրառելիությունը յուրաքանչյուր զոհի նկատմամբ՝ տղամարդ, կին, երեխա,

- զոհերի և վկաների պաշտպանության ապահովման համար համալիր իրավաբանական շրջանակների սահմանումը, որը նախատեսում է պարտավորեցնող միջոցների կիրառում,

- վերահսկողության արդյունավետ և անկախ մեխանիզմի հիմնադրումը:

Ցուցադրե՛ք «Թրաֆիքիմզի ոլորտը կարգավորող միջազգային և ներակետական օրենսդրությունը» դիդակտիկ նյութի «ՀՀ-ի կողմից Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունները՝ վերմագրով պայտները»:

Այնուհետև նշե՛ք, որ ՀՀ-ն Կոնվենցիայով ստանձնել է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

ա) համակարգել և/կամ ամրապնդել ներակետական մարմինների փոխհամագործակցությունը մարդկանց շահագործումը (թրաֆիքինգը) կանխարգելելու և դրա դեմ պայքարելու գործում, արդյունավետ միջոցների կիրառմամբ մշակել այնպիսի քաղաքականություն և ծրագրելու, որոնցում առաջնային դիրքերում կլինեն մարդու իրավունքները, ներառյալ երեխաների շահերի պաշտպանությունը և գենդերային հավասարությունը,

բ) ձեռնարկել կամ ամրապնդել օրենսդրական, վարչական, կրթական, սոցիալական, մշակութային և այլ միջոցներ, որոնք կնպաստեն մարդկանց, հատկապես կանանց և երեխաների շահագործման բոլոր ձևերի պահանջարկի վերացմանը,

գ) բոլոր, այդ թվում՝ օրենսդրական միջոցներով ուժեղացնել սահմանների վերահսկողությունը, չխախտելով անձանց ազատ տեղաշարժի առնչությամբ ստանձնած պարտավորությունները,

դ) թրաֆիքինգը կանխարգելող և դրա դեմ պայքարող իրավասու մարմինները համալրել համապատասխան որակավորում ունեցող մասնագետներով՝ գործադրելով բոլոր հնարա-

վոր միջոցները թրաֆիքինգի զոհերին հայտնաբերելու համար, անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաև Կոնվենցիայի մասնակից այլ պետությունների և համապատասխան օժանդակող կազմակերպությունների հետ, իսկ զոհին հայտնաբերելու դեպքում վերջինիս տրամադրել կացության քույլտվություն,

ե) պաշտպանել զոհերի անձնական կյանքն ու ինքնությունը, վերջիններիս վերաբերող անձնական տվյալները պահպանել և օգտագործել «Անձնական բնույթի տվյալների ավտոմատացված մշակումից անձանց պաշտպանության մասին» կոնվենցիայի դրույթներին համապատասխան:<sup>4</sup>

Այս Կոնվենցիան բացառում է խորականությունը: Այն դրույթները, որոնք վերաբերում են զոհերի իրավունքների պաշտպանությանն ու ապահովմանը, պետք է իրականացվեն առանց որևէ խորականության՝ կապված սերի, ռասայի, մաշկի գույնի, լեզվի, դավանանքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային փորձանասնությանը պատկանելության, ծննդի, գույքային կամ այլ դրույթյան հետ: Կոնվենցիան կիրառվում է մարդկանց թրաֆիքինգի բոլոր ձևերի նկատմամբ, անկախ դրանց ազգային կամ անդրազգային բնույթից, անկախ կազմակերպված հանգակության հետ ունեցած կապից:

Յուրաքանչյուր կողմ իր ներպետական օրենսդրության մեջ տուժած համարվող անձանց համար պետք է սահմանի առնվազն 30 օր տևողությամբ վերականգնման և խորհրդածության, կշռադատման ժամկետ, եթե ողջամիտ հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը տուժող է: Այդ ժամկետը պետք է բավարար լինի տվյալ անձի վերականգնման և թրաֆիքինգով զբաղվողների ազդեցությունից ազատվելու և/կամ իրավասում մարմինների հետ համագործակցության վերաբերյալ իրազեկ

<sup>4</sup> Երեմյան Ա., Թումայան Դ., Գրիգորյան Գ. Հայաստանի Հանրապետությունում թրաֆիքինգի դեմ պայքարի իրավական հիմունքները, Երևան, 2009, էջ 27:

որոշում ընդունելու համար: Այս ժամանակահատվածի ընթացքում նրա նկատմամբ չի կարող կիրառվել վտարման մասին որևէ որոշում<sup>5</sup>: Այս դրույթը չպետք է խոշնդրութիւն իրավասու մարմինների գործունեությունը ազգային օրենսդրությամբ սահմանված ընթացակարգի որևէ փուլում և, մասնավորապես, հանցագործությունների քննության ընթացքում, որի ժամանակահատվածում կողմները պետք է այդ անձանց բույլատրեն գտնվել իրենց տարածքում:

Կոնվենցիան 24-րդ հոդվածում նախատեսում է նաև տուժողների, վկաների և քննությանը աջակցող անձանց պաշտպանությունը դատական մարմինների կողմից:

*Ունկնդիրներին իիշեցուեք, որ այս հանգամանքի առանձին անդրադարձ կկատարվի 6-րդ մոդուլում:*

Մարդու իրավունքների և իիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի, մասնավորապես դրա 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ պետք է ձեռնարկի այնպիսի օրենսդրական կամ այլ միջոցներ, որոնք անհրաժեշտ են դատական քննության ընթացքում.

ա) զոհերի մասնավոր կյանքը և համապատասխան դեպքերում անձի ինքնությունը պաշտպանելու համար,

բ) զոհերի անվտանգությունն ապահովելու և նրանց սպառնալիքից պաշտպանելու համար, իսկ այն դեպքում, եթե զոհերը երեխաններ են՝ նրանց կարիքները հասուկ հոգալու և հատուկ պաշտպանության միջոցներից օգտվելու նրանց իրավունքն ապահովելու համար, համաձայն ներքին օրենսդրությամբ սահմանված պայմանների:

Կոնվենցիայում կարևորվում են նաև այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ զոհերի ֆիզիկական, հոգեքանական և սոցիալական վերականգնմանը նպաստող օրենսդրական կամ այլ միջոցների կիրառումը, անվճար իրավաբանական խորհրդատվություն և իրավաբանական օգնություն ստանալու իրա-

<sup>5</sup> Որոշ երկրներ ժամանակավոր կացության բույլտվություն են տրամադրում տուժածներին, օրինակ, Իտալիա, Նորվեգիա, Կանադա:

վունքը, զոհի վնասների փոխատուցման երաշխավորումն ապահովող օրենսդրական և այլ միջոցների ձեռնարկումը:

Հարկ եղած դեպքում կարելի է ավելի մանրամասն ներկայացնել այդ հարցերը:

Այնուհետև պետք է ներկայացնել ԱՄԿ-ի հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին և Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիաները:

Առաջին Կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերացման հեռահար նպատակով: Այն սահմանում է «հարկադիր կամ պարտադիր աշխատանք» հասկացությունը՝ միաժամանակ մատնանշելով այն աշխատանքները, որոնք չեն ներառվում դրա մեջ:

Պայմանագրովող կողմերը պարտավորվում են վերացնել հարկադիր կամ պարտադիր աշխատանքի կիրառումը՝ իր բոլոր ձևերով, հնարավիր ամենասեղմ ժամկետում:

Կոնվենցիան ամրագրում է նաև պարտավորություններ, որոնք պետք է կատարվեն անցումային ժամանակաշրջանում՝ մինչև հարկադիր կամ պարտադիր աշխատանքի լրիվ վերացումը. մասնագրապես՝ Պայմանագրովող կողմերը պարտավորվում են այդ ժամանակաշրջանում հարկադիր կամ պարտադիր աշխատանքը կիրարել միայն հանրային նպատակներով և որպես բացարիկ պատժամիջոց՝ Կոնվենցիայով նախատեսված պայմանների և երաշխիքների համաձայն:

Հայատանի Հանրապետության ներպետական օրենսդրությամբ, մասնագրապես՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքով, արդեն իսկ արգելված են հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերը: Բացի այդ, հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերը լրիվ վերացնելու պարտավորություն Հայատանի Հանրապետությունն ստանձնել է իր համար ուժի մեջ մտած մի շարք միջազգային իրավական փաստաթղթերով:

Յուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներակետական օրենսդրությունը» դիլակտիկ հյուրի «Հարկադիր աշխատանք» վերնագրով սյադիները:

Այնուհետև զուգադրեք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը» դիդակտիկ մյութի «Հարկադիր աշխատանքը չի ներառում՝» վերնագրով սյամբը: Սեկնարամեք այդ իրավիճակներից յուրաքանչյուրը:

Այնուհետև հակիրծ ներկայացրեք ԱՄԿ-ի Հարկադիր աշխատանքի վերազման մասին կոնվենցիան:

Այս Կոնվենցիան ընդունվել է հարկադիր կամ պարտադիր աշխատանքն արգելվելու նպատակով: Այն իհմնվում է հարկադիր կամ պարտադիր աշխատանքի վերացմանը նպատակառողիված մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի, մասնավորապես՝ Ստրկության մասին (1926 թ.), Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին (1930 թ.), Աշխատավարձի պահպանման մասին (1949 թ.) կոնվենցիաների վրա:

Կոնվենցիայով Պայմանագրովող կողմերը պարտավորվում են ձեռնարկել արդյունավետ միջոցներ՝ լրիվ և արագ վերացնելու համար հարկադիր կամ պարտադիր աշխատանքի բոլոր ձևերը, որոնք կարող են դրսերվել՝

-որպես քաղաքական ներգործության կամ դաստիարակության միջոց կամ որպես պատժամիջոց քաղաքական հայացքների կամ դրանց արտահայտման համար կամ քաղաքական, սոցիալական կամ տնտեսական համակարգի գաղափարականության ընդրիմադիր հայացքների համար,

-որպես աշխատումի հավաքագրման եւ օգտագործման մեթոդ՝ տնտեսական զարգացման նպատակներով,

-որպես աշխատանքային կարգապահության միջոց,

-որպես պատժամիջոց՝ զործադրություններին մասնակցելու համար,

-որպես ռասայական, սոցիալական, ազգային կամ կրոնական խորականության միջոց:

Աշխատանքի միջազգային բյուրոյի Վարչական խորհուրդը, ըստ անհրաժեշտության, ԱՄԿ-ի Գլխավոր խորհրդա-

ժողովին ներկայացնում է գեկույց՝ Կոնվենցիայի կիրառման վերաբերյալ:

Յուցադրե՛ք «Թրաֆիրինզի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը» դիդակտիկ ձյուրի «Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա» վերճագրով պայմուն:

Քանի որ ՀՀ-ը դեռ չի վավերացրել ստրկությանը վերաբերող կոնվենցիաները, հետևաբար անհրաժեշտ է նշել դրանց տեսական նշանակությունը:

Այդ նպատակով ցուցադրե՛ք «Թրաֆիրինզի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը» դիդակտիկ ձյուրի «Ստրկություն», «Ստրկություն է համարվում» վերճագրերով պայմաներուն: Անհրաժեշտություն դեպքում մեկնարաներ յուրաքանչյուր իրադրությունը:

Ունկնդիրներին ներկայացրե՛ք, որ ստրկության դեպքեր ՀՀ-ում պաշտոնապես չեն գրանցվել:

Այնուհետև ներկայացրե՛ք երեխաների աշխատանքի կարգավորմանը վերաբերող միջազգային օրենսդրությունը:

Ակսած իր ձևավորման օրվանից՝ 1919 թվականից, ԱՍԿ-ն պայքարում է երեխայի աշխատանքի վատրարագույն ձևերը վերացնելու համար: Այդ նպատակով ընդունվել են մի շարք կոնվենցիաներ և երաշխավորություններ, սակայն իրավիճակը մնում է ծանր: ԱՍԿ-ի գնահատմամբ այսօր աշխարհում 218 մին երեխա աշխատում է, որից 127 մին-ը՝ վտանգավոր, իսկ 8 մին-ը՝ վատրարագույն աշխատանքներում: Երեխայի աշխատանքն ասոցացվում է աղքատության և խտրականության հետ: Այս խնդիրը կապված է ոչ միայն երեխայի իրավունքների, այլև գեներացիային խտրականության հետ: Այսպես, 1973 թ. ընդունված թիվ 138 կոնվենցիան սահմանում է, որ 15 տարեկան չդարձած երեխան, որը հիմնական ընդիանուր կրթություն չի ստացել, չի կարող ընդունվել աշխատանքի տնտեսության որևէ ճյուղում: Թիվ 182 կոնվենցիան և թիվ 190 երաշխավորությունները, որոնք ընդունվել են 1999 թ. հունիսի 17-ին Ժնևում, պահանջում են անհապաղ և արդյունավետ մի-

զոցներ ձեռնարկել երեխայի աշխատանքի վատքարագույն ձևերը վերացնելու և 18 տարեկանից ցածր տղաներին և աղջիկներին հարկադիր աշխատանքներում չներգրավելու համար:

Ցուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներակետական օրենսդրությունը» դիդակտիկ նյութի «Երեխայի աշխատանքի վատքարագույն ձևերն են հաճողականություն» վերճազրով սպայդները:

Ըստ թիվ 182 կոնվենցիայի՝ երեխայի աշխատանքի վատքարագույն ձևերը ներառում են.

ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը համանման աշխատանքը, ինչպիսիք են երեխաների վաճառքը և առևտուրը, պարտքային ստրկացումը կամ ճորտային կախվածությունը, ինչպես նաև հարկադիր կամ պարտադիր աշխատանքը, այդ թվում՝ երեխաների պարտադիր կամ հարկադիր հավաքագրումը զինված լնդիարումներում օգտագործելու համար,

բ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը մարմնավաճառությամբ գրադարձությունը, պոռնոգրաֆիկ արտադրանքի արտադրության կամ պոռնոգրաֆիկ ներկայացումների համար,

գ) երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը հակախրավական գործունեությամբ գրադարձությունը, մասնավորապես թմրանյութերի արտադրման և վաճառքի համար, ինչպես դրանք սահմանված են համապատասխան միջազգային պայմանագրերում,

դ) աշխատանքը, որն իր բնույթով կամ իր կատարման պայմաններով կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

Հարկ եղած դեպքում մեկնարանե՛ք երեխայի աշխատանքի վատքարագույն ձևերի առանձին դրսելորումները:

Մասնակից պետությունները պարտավորվում են մշակել գործողությունների ծրագրեր այդ երեսույթի դեմ պայքարելու համար, լնդիուագրեական սանկցիաների կիրառումը: Բացի դրանից՝ նրանք նախատեսում են ձեռնարկել միջոցառում-

ներ՝ թույլ չտալու համար երեխաներին ներգրավել աշխատանքի վատքարագույն ձևերում, իսկ այն երեխաները, որոնք արդեն ներգրավվել են այդպիսի աշխատանքներում, զրադիվել նրանց վերականգնման, սոցիալական ինտեգրացիայի, կրթության, մասնագիտական պատրաստվածության և այլ հարցերով։ Երեխայի աշխատանքը տարրեր կերպ է ազդում աղջիկների և տղաների վրա։ Աղջիկները պահանջում են հատուկ ուշադրություն, քանի որ խտրականությունն աղջիկների նկատմամբ հաճախ դարձնում է նրանց առավել անպաշտաց շահագործումից։ Տղաները նույնապես ենթարկվում են խտրականության, նրանք հաճախ ներգրավվում են ակտիվ մարտական գործողություններում։ Դրա հետ կապված գենդերային իրավահավասարության հարցերը պետք է ներքափանցեն պետության քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մեջ։

Բերեք օրինակ հայաստանյան դատական պրակտիկայից և այդ օրինակի օգնությամբ վերլուծեք միջազգային օրենսդրության կիրառման հնարավորությունը դատական պրակտիկայում։

ՀՀ քր. օր.-ի 132<sup>1</sup>-րդ հոդվածով հարուցված գործ թիվ ԵԶՐԴ 0054/01/2008-ով 2009 թ. ապրիլի 2-ին Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանում կայացվեց մեղադրական դատավճիռ, որի պատճառական մասում բերված է հետևյալ հիմնավորումը. «Դատարանը գտավ և գործի նյութերով իիմնավորված է համարում, որ ամրաստանյալը գործել է ուղղակի դիտավորությամբ՝ շահույթ ստանալու նպատակով օգտագործել է 12-15 տարեկան դեռահաս տուժողների և հենց այդ կտրվածքով նրանց վիճակի խոցելիությունը, նաև այն, որ վերջիններիս նկատմամբ հարկադրանքը դրանորվել է սպառնալիքներ տալով, վախեցնելով, բռնություն գործադրելով, նաև նրանց համար անցանկալի կրթահամալիրներ զնալու հարկադրելու սպառնալիքով։ Դատարանը՝ շահույթ ստանալու նպատակով դեռահասներին առավոտվաճից մինչև ուշ զիշեր մուրացկա-

նուրյան մեջ ներգրավելը, բացի հակահասարակական արարք համարելուց, դիտում է նաև որպես նրանց պարտադրված աշխատանք: ԱՄԿ Ժնևամ 17.06.1999 թ. «Երեխանների աշխատանքի վատրարագույն ձևերի վերացման մասին» թիվ 182 կոնվենցիայի համաձայն՝ մանկական աշխատանքի վատրարագույն ձևեր են համարվում հակահասարակական գործունեության մեջ երեխայի օգտագործումը, հավաքագրումը և առաջարկություն անելը կամ աշխատանքը, որն իր կատարման բնույթով կամ պայմաններով կարող է վճաս հասցնել երեխանների առողջությանը, անվտանգությանը և բարոյականությանը: Տվյալ դեպքում ամբաստանյալը մանկական տուժողներին ոչ միայն ներգրավել է հակահասարակական գործունեության՝ մուրացկանության մեջ, այլև առավտավանից մինչև ուշ գիշեր շահագործելով. շահույթ ստանալու նպատակով հարկադիր աշխատանքի ներգրավելով, այդ աշխատանքով լուրջ վճաս է պատճառել երեխանների առողջությանը, բարոյականությանը և անվտանգությանը: Գործով հաստատվել է, որ տուժողներից ստացած գումարները ամբաստանյալն օգտագործել է հիմնականում իր կարիքների համար: Դատարանը զտավ նաև, որ տուժողների ցուցմունքների արժանահավատության հարցը քննարկելիս հաշվի են առնելու գործի փաստական հանգամանքներից բխող ցուցմունքները»:

Վերլուծություն: Դասավանդողը պետք է վերլուծի գործի փաստական հանգամանքները և ներկայացնի բերված օրինակը՝ որպես միջազգային և ազգային օրենսդրության համատեղ կիրառման դեպք:

Անհրաժեշտության դեպքում կարող են ներկայացնել նաև այլ օրինակներ:

**2.3. Խթաֆիքինգի ոլորտը կարգավորող ներպետական օրենսդրության ակնարկ**

Այնուհետև ամփոփ թվարկելով թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային ակտերը՝ դասավանդողը ներկա-

յազմում է թրաֆիրինգի ոլորտը կարգավորող ազգային օրենսդրություն:

Առաջնահերթ ներկայացվում են ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ և 132<sup>2</sup>-րդ հոդվածները:

Յուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրություն» դիդակտիկ նյութի «ՀՀ քրեական օրենսգրքի՝ թրաֆիրինգին վերաբերող հոդվածներ» վերնագրով պատր:

Առանձնահատուկ ուշադրություն դարձնելով ճրան, որ ՀՀ քրեական օրենսգրքում կատարվել են փոփոխություններ, բայց չմանրամասնելով դրանց բովանդակությունը (Կներկայացվի 2-րդ մոդուլում), ուղղակի համեմատե՛ք ՀՀ քր. օր.-ի 132-րդ հոդվածի բովանդակությունը և ՍԱԿ-ի ու ԵԽ-ի կոնվենցիաներով տրված սահմանումները:

Բերե՛ք դա որպես միջազգային նորմերի իմայեմենտացիայի օրինակ:

Յուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրություն» դիդակտիկ նյութի «2004-2006 թթ., 2007-2009 թթ., 2010-2012 թթ. ՀՀ կառավարության ծրագրեր» վերնագրով պատր:

Բազարե՛ք լուրարամջուր ծրագրի ուղղվածություն:

2010-2012 թթ. Ծրագրի միջոցարումներից ընտրեք միքանիստ և ներկայացրեք դրանց կատարման տարրերակները և հմարավորությունը:

Յուցադրե՛ք «Թրաֆիրինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրություն» դիդակտիկ նյութի «Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերող ազգային ծրագրի» վերնագրով պատր:

Հարցուե՛ք ունկնդիրներին, թե ինչու Երեխայի իրավունքների պաշտպանության վերաբերող ազգային ծրագրի մեջ նշվում է, որ ՀՀ-ում երեխաների թրաֆիրինգ չկա: Պատճառն այն է, որ այդ ծրագրի բնորոշման ժամանակ ՀՀ-ում դեռ չկար երեխաների թրաֆիրինգին վերաբերող հարուցված որևէ քրեական գործ:

Յուղադրե՛ք «Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միազգային և ներպետական օրենսդրությունը» դիդակտիկ հյութի «Զոհերի պաշտպանության վերաբերող ակտեր» վերճազրով պայման:

Այնուհետև ունկնդիրներին հակիրժ ներկայացրե՛ք գոհակենտրոն քաղաքականության բովանդակությունը՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով գործող իրավական ակտերի վրա:

Նշե՛ք, որ այդ ակտերի վերաբերյալ ավելի մանրամասն խոսվելու է հաջորդ մոդուլների ժամանակ, և այս պայդները հետապնդում են թրաֆիքինգի ոլորտը կարգավորող ազգային օրենսդրության վերաբերյալ ընդհանուր պատկերացում ստեղծելու նպատակ:

Մեկնարաննե՛ք Ազգային ուղղորդման կարգը՝ որպես գոհերի պաշտպանության ու աջակցության ոլորտի հիմնական փաստարություն:

Անհրաժեշտության դեպքում մեկնարաննե՛ք նաև սոցիալական ոլորտը կարգավորող որոշ օրենսդրական ակտեր: Օրինակ՝ «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը:

### **3. Նյութեր բաժանման համար:**

**Բաժանմող նյութ թիվ 1** - ՍԱԿ-ի Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ 2000 թ. կոնվենցիա,

**Բաժանմող նյութ թիվ 2** - Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը՝ Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտության կանխարգելման, արգելման և պատժի մասի,

**Բաժանմող նյութ թիվ 3** - Եվրոպայի խորհրդի 2005 թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիա,

**Բաժանմող նյութ թիվ 4** - Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի նախարարի մասին կոնվենցիա,

**Բաժանմող նյութ թիվ 5** - Հարկադիր աշխատանքի վերացման մասին կոնվենցիա,

**Բաժանվող Այութ թիվ 6** - Երեխայի աշխատանքի վատ-  
քարագույն ձևերի արգելման և արմատախիլ անելու անհա-  
պաղ միջոցառումների մասին կոնվենցիա:<sup>6</sup>

**Բաժանվող Այութ թիվ 7**

Ունկնդիրներին տրամադրվում է հետևյալ ցանկը.

**Թրաֆիքինզի դեմ պայքարի միջազգային-իրավական  
այլ փաստաթղթեր**

Ա/ Ընդհանուր կիրառման փաստաթղթեր.

1. Մարդու իրավունքների համընդիանուր հոչակագիր,  
1948 թ. դեկտեմբերի 10,

2. Ժնևի կոնվենցիան՝ Գործող բանակներում վիրա-  
փորների և հիվանդների վիճակի բարելավման մասին, 1949 թ.  
օգոստոսի 12,

3. Ժնևի կոնվենցիան՝ Ծովում գինված ուժերի կազմից  
վիրավորների, հիվանդների և նավարեկումից տուժած ան-  
ձանց պաշտպանության մասին, 1949 թ. օգոստոսի 12,

4. Ժնևի կոնվենցիան՝ Ռազմագերիների հետ վարվելու  
մասին, 1949 թ. օգոստոսի 12,

5. Ժնևի կոնվենցիան՝ Պատերազմի ժամանակ քա-  
ղաքացիական բնակչության պաշտպանության մասին, 1949  
թ. օգոստոսի 12,

6. 1949 թ. Ժնևի կոնվենցիայի լրացուցիչ արձա-  
նագրությունն՝ Տեղական գինված կոնֆիլիկտների զոհերի  
պաշտպանության վերաբերյալ, արձ. 2, 1977 թ. հունիսի 8,

7. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների  
մասին միջազգային դաշնագիր, 1966 թ. դեկտեմբերի 16,

8. Փախստականների կարգավիճակի մասին կոն-  
վենցիան, 1951 թ. հուլիսի 28,

9. Փախստականների կարգավիճակի մասին կոն-  
վենցիային կից արձանագրությունը, 1967 թ. հոկտեմբերի 4,

<sup>6</sup> Այս Այութերը տրամադրվելու են Էլեկտրոնային տարբերակով՝  
սկավառակի վրա:

10. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան, 1989 թ. նոյեմբերի 20,

11. Երեխայի իրավունքների մասին կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը՝ Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին, 2000 թ. մայիսի 25,

12. Երեխայի աշխատանքի վատրարագույն ձևերի մասին կոնվենցիա, 1999 թ. հունիսի 17, Ժնև,

13. Վիեննայի հոչակագիրը և գործողությունների ծրագիրը՝ ընդունված մարդու իրավունքների վերաբերյալ համաշխարհային կոնֆերանսում 1993 թ. հունիսի 25-ին,

14. Կանանց նկատմամբ խստրականության բոլոր ձևերի վերացման մասին ՍԱԿ-ի կոնվենցիան, 1979 թ. դեկտեմբերի 18,

15. ՍԱԿ-ի Հազարամյակի հոչակագիր, 2000 թ. սեպտեմբերի 8,

16. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա, 1950 թ. նոյեմբերի 4,

17. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966 թ. դեկտեմբերի 16,

18. Էքստրադիցիայի մասին Եվրոպական կոնվենցիան, 1957 թ.:

**Բ/ Փաստաթղթեր ստրկության կամ քրաֆիքինգի դեմ.**

1. Ստրկության դեմ պայքարի մասին կոնվենցիա, 1926 թ. սեպտեմբերի 25,

2. Ստրկության վերացման, ստրկավաճառության և ստրկությանը նույն ստրկության ու ինստիտուտների վերացման մասին լրացուցիչ կոնվենցիա, 1956 թ. սեպտեմբերի 7,

3. ԱՍԿ-ի Հարկադիր աշխատանքի վերաբերյալ թիվ 29 կոնվենցիան, 1930 թ. հունիսի 28,

4. ԱՍԿ-ի Հարկադիր աշխատանքը վերացնելու մասին  
թիվ 105 կոնվենցիան, 1957 թ. հունիսի 25,

5. ԱՍԿ-ի Աշխատանքի լնդունելու նվազագույն  
տարիքի մասին թիվ 138 կոնվենցիան, 1973 թ. հունիսի 26,

6. Երեխաների աշխատանքի խտրականության վե-  
րացման մասին կոնվենցիա, 1957թ.,

7. ՍԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանգա-  
վորության դեմ» կոնվենցիա, 2000թ.,

8. Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը՝ Մարդկանց,  
հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման,  
արգելման և պատժի մասին,

9. Պալերմոյի 2000 թ. արձանագրությունը՝ Ցամաքով,  
ծովով և օդով միզրանտների անօրինական ներմուծման դեմ,

10. Եվրոպայի խորհրդի 2005 թ. մայիսի 16-ի «Մարդ-  
կանց շահագործման (թրաֆիքնոգի) դեմ պայքարի մասին»  
կոնվենցիան:

**Գ/** **Փաստաթոթեր,** որոնք վերաբերում են մարդկանց  
առևտրին կամ ստրկությանը՝ կապված սեռական շահագործ-  
ման հետ.

1. Սպիտակ ստրկուիիների առևտրի դեմ պայքարելու  
մասին միջազգային համաձայնագրի, 1904 թ. մայիսի 18,

2. Սպիտակ ստրկուիիների առևտրի դեմ պայքարելու  
մասին միջազգային կոնվենցիա, 1910 թ. մայիսի 4,

3. 1904 թ. մայիսի 18-ի համաձայնագրի և 1910 թ. մայի-  
սի 4-ի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն, 1910 թ. մա-  
յիսի 4,

4. Սպիտակ ստրկուիիների առևտրի դեմ պայքարելու  
մասին միջազգային համաձայնագրի լրացուցիչ արձանագ-  
րություն, 1949 թ. մայիսի 4,

5. Կանանց և երեխաների առևտրի դեմ պայքարելու  
մասին կոնվենցիա 1921 թ. սեպտեմբերի 30,

6. Զափահաս կանանց ապօրինի փոխադրումները  
կանխելու վերաբերյալ կոնվենցիա, 1933 թ. հոկտեմբեր 11,

7. 1921 թ. սեպտեմբերի 30-ի Կանանց և երեխաների առևտության դեմ պայքարելու մասին կոնվենցիայի և 1933 թ. հոկտեմբերի 11-ի Չափահաս կանանց ազօրինի փոխադրումները կանխելու վերաբերյալ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն, 1947 թ. նոյեմբերի 12,

8. 1933 թ. հոկտեմբերի 11-ի Չափահաս կանանց ազօրինի փոխադրումները կանխելու վերաբերյալ կոնվենցիայի լրացուցիչ արձանագրությունը, 1947 թ. նոյեմբերի 12,

9. Մարդկանց առևտություն և երրորդ անձանց կողմից պոռնկության շահագործման դեմ պայքարելու մասին կոնվենցիա, 1949 թ. մարտի 21:

### ***Բաժանմող նյութ թիվ 8***

Հոդված 132. Մարդու քրաֆիքինգը կամ շահագործումը

1. Մարդու քրաֆիքինգը՝ շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, բարցնելը կամ ստանալը, ինչպես նաև մարդուն շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարեւության կամ վատահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու կամ այդպիսիք խոստանալու միջոցով՝

պատժվում է ազատազրկման՝ իինքից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմանը կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) պաշտոնեական դիլրճ օգտագործելով,

4) կյանքի կամ առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,

5) ակնհայտ իրի կնոջ նկատմամբ,

6) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնազրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադպելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,

2) անզգությամբ առաջացրել է տուժողի նահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնչորս տարի ժամկետով՝ գույքի բռնազրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադպելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

4. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով շահագործում են համարվում այլ անձի՝ պողնկության շահագործումը կամ սեքսուալ շահագործման այլ ձևերը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկության կամ ստրկությանը նմանվող վիճակի մեջ դնելը, առք կամ վաճառքը, օրգանները կամ հյուսվածքները վերցնելը:

5. Սույն հոդվածով, ինչպես նաև սույն օրենսգրքի 132.2-րդ հոդվածով նախատեսված հանցագործություններից

տուժած անձն ազատվում է իր կատարած ոչ մեծ կամ միջին ծանրության այն հանցագործությունների համար քրեական պատասխանատվությունից, որոնցում ներգրավված է եղել իր նկատմամբ իրականացված թրաֆիքինզի կամ շահագործման ընթացքում և այդ արարքները կատարել է հարկադրանքի ներքո:

### **Բաժանվող նյութ թիվ 9**

Հոդված 132.2. Երեխայի կամ հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձի թրաֆիքինզը կամ շահագործումը

1. Շահագործման նպատակով երեխային, հոգեկան խանգարման հետևանքով իր արարքի բնույթն ու նշանակությունը ամրողությամբ կամ մասամբ գիտակցելու կամ դա դեկավարելու հնարավորությունից զրկված անձին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ինչպես նաև այդպիսի անձանց շահագործելը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադեցնելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

### **2. Նույն արարքը, որը կատարվել է՝**

- 1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,
- 2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 3) պաշտոնեական դիրքը օգտագործելով,
- 4) բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով,
- 5) առևանգման միջոցով,
- 6) ակնհայտ հիմք կնոջ նկատմամբ,

7) Հայաստանի Հանրապետության պետական սահմանը հատելով՝ անձի տեղափոխումը կազմակերպելու միջոցով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադվելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է կազմակերպված խմբի կողմից,

2) անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ տասներկուսից տասնինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ գրադեցնելու կամ որոշակի գործունեությամբ գրադվելու իրավունքից գրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

#### **4. Հարցեր քննարկման համար:**

1. Ի՞նչ է թրաֆիքինգը:

2. Ինչպե՞ս է թրաֆիքինգը ներկայացված ՍԱԿ-ի 2000 թ. Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ կոնվենցիայում և նրան կից Պալերմոյի արձանագրությունում:

3. Ինչպիսի՞ հանցագործություն է թրաֆիքինգը ըստ ՍԱԿ-ի Կոնվենցիայի:

4. Ինչպե՞ս է թրաֆիքինգը ներկայացված ԵԽ-ի 2005 թ. Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) դեմ պայքարի մասին կոնվենցիայում:

5. Որո՞նք են ԵԽ Կոնվենցիայի առանձնահատկությունները ՍԱԿ-ի Կոնվենցիայի հետ համեմատած:

6. Ո՞րն է Հարկադիր կամ պարտադիր աշխատանքի մասին, Հարկադիր աշխատանքի վերացման մասին, Երեխա-

յի աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման մասին կոնվենցիաների դերն ու նշանակությունը քրաֆիքինզի ոլորտը կարգավորող միջազգային իրավական գործիքներում:

7. Մարդու ո՞ր իրավունքներն են խախտվում քրաֆիքինզի դեպքում և ո՞ր կոնվենցիաներով են կարգավորվում այդ իրավունքները:

8. Ինչպես՝ են մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ ազգային և միջազգային իրավական գործիքների հարաբերակցվում միմյանց հետ, որոնց առանձնահատկությունները:

## 5. Խնդիրների քննարկում

Բերվում է մի օրինակ քրաֆիքինզի դեպքերից:

Ա-6 և իր որոյի Գ-6 բերքում կարդացին մի հայտարարություն, որ Ռուսաստանում շինարարական աշխատանքների համար անհրաժեշտ են բանկուներ և օգնականներ, և որոշեցին մեկնել գումար փաստակելու: «Գործառուն» ոչ մի փաստաբույր չէր ձևակերպել Հայաստանում՝ պատճառաբանելով, որ ամենը կկազմեն տեղ հասնելու պես: Այդ պատրվակով նրանցից վերցնում են անձնագրերը և այլևս չեն վերադարձնում: Այնուհետև տարբեր պատճառաբանություններով աշխատավարձի վճարումը ձգձգվում է, իսկ 6 ամիս անց «զործառուն» նրանց հայտնեց, որ ոչ մի աշխատավարձ նրանք չեն ստանա և պետք է այլպես էլ շարունակեն անվճար աշխատել:

Ա-6, շխանդուրժելով այդ ամենը, փորձեց դիմել իրավապահ մարմիններին, բայց նրա դիմադրությունը հաղթահարելու նպատակով նրան ծեծում են՝ պատճառելով ծանր մարմնական վնասվածքներ: Որդին, այդ ամենը տեսնելով, համաձայնեց շարունակել կատարել այդ աշխատանքները:

Հարց ունենալիրներին. Ինչպիսի՝ իրավունքներ են խախտվել այս կոնկրետ օրինակում: Նախապես հայտնե՞ք, որ սիսայ պատասխաններ չկան. նպատակը մասնակիցների կարծիքներին ծանոթանալն է:

Ամրագրեր բոլոր պատասխանները, այնուհետև համառոտ քննարկմամբ թվարկված խախտված իրավունքներից ընտրեք այս լեզուում խախտվածները և մեկնարանները, թե ինչպես է արտահայտվում խախտումը:

Բերեք մեկ այլ օրինակ:

Ա-ն վեց տարեկան էր, երբ նրա ըմտաճիքը տեղափոխվեց Երևան: Նրա հայրը մահացավ, և Ա-ի քույրերին և եղորդն ուղարկեցին տարբեր մանկատներ, քանի որ նրանց մայրը հնարավորություն չուներ երեխաններին պահելու: Որոշ ժամանակ Ա-ն սովորում էր հատուկ կրթական հաստատությունում: Երբ դարձավ 12 տարեկան, նրա մայրը եկավ և նրան տարավ մանկատնից՝ պատմելով, որ նա նորից ամուսնացել է շատ լավ մի անձնավորության հետ, որը նրա երեխաններին «հայրություն» կանի: Իրականում խորք հայրը շատ էր խստ և ոչ մի տեղ չէր աշխատում:

Շուտով նա ստիպեց տղային մուրացկանությամբ գրադարձել և նրանից վերցնում էր հավաքած ամրող գումարը: Անգամ «սահմանել» էին, թե օրական որքան գումար պետք է բերի. ոչ պակաս, քան 5000 դրամ: Այն օրերը, երբ նա չէր կարողանում հավաքել անհրաժեշտ գումարը, ամենածանր էին, քանի որ նրան դաժանորեն ծեծում էին, գրկում էին սննդից և ցրից, անգամ արգելում էին քննել:

Ծեծից հետո նա հաճախ փախչում էր տնից, քայլ շուտով հայտնաբերվում էր և վերադարձվում կա՞մ խորք հոր, կա՞մ նրա ծանոքների կողմից: Նա արդեն հոգնել էր ծեծից ու մուրացկանությունից և, իմանալով Հայ օգնության ֆոնդի գտնվելու վայրի մասին, դիմեց նրանց:

Մարդու իրավունքների խախտմանը վերաբերող այս օրինակներով ամրապնդեք այն նյութը, որը վերաբերում է բրաֆիրինցի և մարդու իրավունքների հարաբերակցությանը, ու նշեք այն իրավունքները, որոնք խախտվել են տվյալ օրինակներում:

Մեկ այլ օրինակ.

*L-Ա, չունենալով ապրուստի միջոց և իմանալով, որ իր հարեան Ս-Ա Դուքայ է տանում պոռնիկների՝ այնտեղ գումար վաստակելու նպատակով, տալիս է իր համաձայնությունը մարտնավաճառությամբ զրադշելու այնտեղ:*

*Դուքայ մեկնելուց հետո Ս-Ա L-ին ենթարկեց սեռական շահագործման՝ պարտադրելով նրան օրական «սպասարկել» 25-30 տղամարդու և դրա դիմաց ոչինչ շվճարելով, ասելով, որ նրա վաստակած գումարները հազիկ բավականացնում են սննդի և կենցաղային ծախսները հոգալու համար: Բացի այդ, L-Ա հնարավորություն չուներ դուրս գալու հյուրանոցային համարից, որը հսկվում էր անվտանգության աշխատակիցների կողմից՝ մուտք ու ելք սահմանափակելու նպատակով, և որտեղ Ս-Ա բերում էր հաճախորդներին:*

*Սարդու իրավունքների խախտմանը վերաբերող այս օրինակներով ամրապնդեր այն նյութը, որը վերաբերում է քրաֆիրինգի և մարդու իրավունքների հարարերակցությանը, ու նշեր այն իրավունքները, որոնք խախտվել են տվյալ օրինակներում:*

*Դասավանդողը կարող է բերել նաև այլ օրինակներ կամ զործնական հարցեր՝ ելնելով նպատակահարմարությունից ու անհրաժեշտությունից:*

## **6. Սլայդներ:<sup>7</sup>**

*Թրաֆիքինգի ոլորտը կարգավորող միջազգային և ներպետական օրենսդրությունը:*

---

<sup>7</sup> Սլայդները տրամադրվելու են Էլեկտրոնային տարրերակով՝ սկավառակի վրա:



Ապագրված է «ԱՍՈՂԻԿ» իրատարակչության տպարանում:

Ք. Երևան, Սայաթ-Նովս 24 (գրասենյակ)

Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)

Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63

Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)